ՀՏԴ574:82-1/-9(479.25)

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՆՐԵՐՈՒՄ

Նելլի Կարապետյան
մ.գ.թ., դոցենտ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ

Անոտացիա

Հոդվածում դիտարկված է մարդու և բնություն փոխհարաբերությունների հիմնախնդիրը հայ բանահյուսության ժանրերում: Վերլուծված և ընդհանարցված է «էկոլոգիական արժեք» հասկացության վերաբերյալ տարբեր մտածողների տեսական հայացքները և տրվել է այդ հասկացության նոր սահմանում:

Հոդվածում քննարկված են մի շարք մեթոդաբանական մոտեցումներ, որոնք էկոլոգիական արժեբանության տեսանկյունից հենքային են էկոլոգիական արժեքների կառուցվածքի և բովանդակության որոշակիացման համար: Բացահայտվել է, որ էկոլոգիական արժեքներն արտացոլված են ժողովրդական բանահյուսական ստեղծագործություններում և պայմանավորում են «մարդ-հասարակություն-բնություն» փոխհարաբերության բարոյագիտական նորմերի և էկոլոգիապես գրագետ վարքագծի դրսևորումը:

Բանալի բառեր՝ *էկոլոգիական արժեք, կոէվոլյուցիոն զարգացում, հայ բանահյուսություն, «մարդ-հասարակություն-բնություն» փոխհարաբերություն, էկոլոգիական ներուժ, բնապահպանական մշակույթ, էկոլոգիապես գրագետ վարքագիծ, էկոլոգիական արժեբանություն:*

Այսօր, համամոլորակային էկոլոգիական ճգնաժամի պայմաններում, փոխակերպվող հասարակության կայուն զարգացումը բացառապես որոշվում է մարդուն առաջնորդող արժեքներով: Ակադեմիկոս Ն.Դ. Նիկանդրովն արժեքները դիտելով որպես դաստիարակության, կյանքի նպատակների հիմք՝ նշում է, որ «Արժեքներն ամրագրում են այն ամենը, ինչը մշակվել է հասարակության, մարդու կյանքի ընթացքում, իսկ ազգային մտածելակերպում դրանք հանդես են գալիս որպես նորմ: Եթե ժամանակի թելադրանքով փոխվում են արժեքները, փոխվում են նորմերը, հետևաբար փոխվում են նաև դաստիարակության նպատակները» [7, էջ 9]:

Արժեքների, արժեքային կողմնորոշումների համակարգը արտացոլում է հասարակության, էթնոսի պատմական ընթացքը, գիտական, ազգային, մշակութային ներուժը, առաջադրում զարգացման հեռանկարները և բնութագրում են ոչ միայն «մարդ-հասարակություն» այլև «մարդ-հասարակություն-բնություն» փոխհարաբերությունները: Այս համատեքստում գերակա է էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացը, որը նպատակադիր է «մարդ-կենսոլորտ» բազմամակարդակ համակարգի կոէվոլյուցիոն զարգացմանը և արժեքների ավանդական, մարդակենտրոն համակարգից էկոբարոյական արժեքների համակարգի, էկոկենտրոնության անցմանը:

Մարդ արարածի և մայր բնության դարավոր համակեցությունը մարդկայինի գնահատման չափանիշ է և ունի իր արժեբանական հիմքերը: Շրջապատող միջավայրի, բնության նկատմաբ անձի վերաբերմունքը, վարքը կարգավորող արժեքներն էկոլոգիական

արժեքներն են: Գիտնականների կողմից էկոլոգիական արժեքների տարբեր բնութագրումներ են տրվել, սակայն դրանք սահմանազատված չեն և օրինաչափորեն լրացնում են իրար: Մի շարք մտածողներ պնդում են, որ էկոլոգիական արժեքները բնութագրում են սուբյեկտ-օբյեկտ հարաբերությունը և ձեռք են բերում անձնային նշանակություն (Մ.Ս.Կագան), իսկ ոմանք էլ այն կարծիքին են, որ էկոլոգիական արժեքներն իրենց բովանդակության մեջ կրում են յուրաքանչյուր արժեքին բնորոշ գծեր (Ս.Յանավիչուս): Կ.Ստոշկուսը նշում է, որ էկոլոգիական արժեքների յուրահատկությունը պայմանավորված է բնության օբյեկտների և երևույթների, կենսաբանական բազմազանության, կենսահամակազերի փոխկապակցվածության գնահատականով: Բնության մեջ օրինաչափ գործող կապերը սուբյեկտին մղում է էկոլոգիական գործունեության՝ համագործակցելով այլ սուբյեկտների հետ [8, էջ 38-41]:

Ընդհանրացնելով մտածողների դիտարկումները՝ մենք էկոլոգիական արժեքները սահմանում ենք որպես համամարդկային արժեքային համակարգի ենթակառուցվածք, որը որոշում են բնության օբյեկտների և երևույթների, կենսոլորտի կայունության, բնության և հասարակության կոէվոլյուցիոն զարգացման նշանակությունը մարդու և ընդհանարպես հասարակության համար [4, էջ 40]:

Որպես էկոլոգիական արժեքներ հանդես են գալիս «բնությունը», «աշխարհի ամբողջական պատկերը», «կենսահամակարգերի միասնությունը», «առողջ ապրելակերպը», «կենսաբանական բազմազանությունը», «կենսոլորտի կայունությունը», «մարդ-բնություն համակարգի կոէվոլյուցիոն զարգացումը», «սոցիալական պատասխանատվությունը»: Էկոլոգիական արժեքները մի կողմից կարող են հադես գալ որպես վարքի և գործունեության դրդապատճառներ, մյուս կողմից, նպաստել որոշակի դիրքորոշումների ձևավորմանը:

Էկոլոգիական արժեքների ներքին կառուցվածքի և բովանդակության որոշարկումն ենթադրում է մի շարք մեթոդաբանական մոտեցումների հաշվառում:

Կենսակենտրոն մոտեցումը ընդգծում է, որ միայն մարդուն (և ոչ մյուս կենդանի օրգանիզմներին) է վերապահված բնության նկատմամբ որոշակի բարոյական պարտավորվածություններ, այնինչ այսօր բնության պահպանության, կայուն զարգացման, էկոլոգիական անվտանգության գնահատման չափանիշները սահմանվում են միայն հանուն մարդու բարեկեցության:

Եթե էկոլոգիական արժեքները դիտարկենք էկոմարդասիրական մոտեցման տեսանկյունից, ապա կարող ենք ասել, որ դրանք ձևավորվելով «մարդ-բնություն» և «մարդ-մարդ» համակարգում ամրագրում են այն ամենը ինչը դարեր շարունակ մշակվել է «մարդ-բնություն-հասարակություն» համակարգում և սահմանում բնության մեջ մարդու գործունեության նորմերի, վարքի կանոնների համալիրը: Առաջին հայացքից թվում է, որ ներկայացված դիրքորոշումը մարդակենտրոն է, սակայն եթե այդ համակարգում նորմերի, փոխհարաբերությունների կարգավորման մեխանիզմները խարսխվեն էկոլոգիական բարոյագիտության հիմնադրույթների վրա, ապա «հասարակությունը ընդունակ կլինի մուտք գործել Գիտակցության ոլորտ, այսինքն՝ իր պատմության այն շրջանը, երբ հասարակությունը կկարողանա իրականացնել բնության և հասարակության կոէվոլյուցիոն ռեժիմը» [6, էջ 23]:

Էկոլոգիական արժեքների ձևավորման գործընթացում կարևորում ենք էթնոմանկավարժական մոտեցումը, քանի որ «էթնոսները ծագում են բնության մեջ, նրանից անբաժան, որպես նրա մի մասը և ապրում են ըստ բնության օրենքների: Հնում մարդիկ իրենց բնությունից դուրս պատկերացնել չէին կարողանում:» [3, էջ 35]: Գիտական գրականության

վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ էթնոմանկավարժական մոտեցումը ներառում է մանկավարժական մշակույթի երեք կարևոր սկզբնաղբյուրների դիալեկտիկական միասնություն՝ ազգային, միջազգային և համաշխարհային: Նման մոտեցումը ենթադրում է ոչ միայն ազգային ինքնագիտակցության ձևավորում, այլև նպաստում համաշխարհային մշակութային, կրթական տիրույթ ինտեգրվելուն:

Էկոլոգիական արժեքների ձևավորման գործընթացում էթնոմանկավարժական մոտեցումը մեթոդաբանական հիմք է, քանի որ բնութագրում են տվյալ էթնոսի և բնության փոխհարաբերության բարոյական նորմերը, որոնք ազգային արժեքների, ավանդույթների, սովորույթների, ժողովրդական բանահյուսական ստեղծագործությունների ձևով պահպանվում են պատմական հիշողությունում և փոխանցվում սերնդեսերունդ:

Բնապահպանական դարավոր մշակույթ ունեցող հայ ժողովուրդը պաշտամունքի առարկա է դարձրել բնությունը, ապրել ու արարել բնության հետ ներդաշնակության մեջ, ստեղծել և սերնդեսերունդ փոխանցել անգնահատելի մշակութային ժառանգություն՝ պահպանելով ազգային ինքնությունը, վարքն ու բարքը: Մայր բնությունը հայի համար հավատի, ներշնչման աղբյուր է: Դրա վառ ապացույցն է հայ ժողովրդական բանահյուսությունում բնաճանաչողական, բնապահպանական գաղափարների արտացոլումը, Բնության գովերգումը, աստվածացումը: Մարդու և բնության անբաժանելի միասնության մեջ էին մեր նախնիները տեսնում հոգևորի արժեքների զարգացումը:

«Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված է ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը և գեղագիտական ընկալումները: Բանահյուսությունն ունի ճանաչողական մեծ արժեք, պարունակում է տվյալ տարածաշրջանի բնաշխարհի, մարդկանց մասին հարուստ տեղեկություններ» [2, էջ 4]:

Ակնհայտ է, որ ժողովրդական բանահյուսությունը ունի ոչ միայն ճանաչողական այլև գնահատող գործառույթ: Հայ ժողովրդական բանահյուսությունն արտացոլում է մեր ժողովրդի հարուստ մշակութային անցյալը, բարոյական, բնապահպանական նկարագիրը: Որպես բանավոր, կոլեկտիվ բնույթի շարադրանք՝ բանահյուսությանը հատկանշական է բազմապատումը, միահյուսվածությունը և կարծես այդ առանձնահատկություններն ուղղակի և անուղղակի կերպով պայմանավորված են «մարդ-բնություն», «մարդ-հասարակություն» և «մարդ-մարդ» փոխհարաբերություններով: Ավելին, երբ վերլուծում և համադրում ես հայ բանահյուսության ժանրերի բովանդակային ուղղությունները, զարմանում ես, թե ինչպես են մեր նախնիները «անտեղյակ» գիտությամբ պաշտամունքի առարկա դարձրել օդ, հող, ջուր, կրակը, բուսական և կենդանական աշխարհը և անվերապահորեն ընդունել բնության զորեղությունը: Այդպիսի դրվագներ ենք հանդիպում «Հայկ և Բել» առասպելում: Գ. Սրվանձտյանցը ներկայացնում է ժողովրդական զրույց կռապաշտ Բելի մասին, ինչպես է Հայկը հաղթելուց հետո նրա դին բարձրացնում է Նեմրութ լեռան գագաթը, թոնիր փորում, դիակը այրում: Աստծու հրամանով կրակը ջուր է դառնում, և Բելի մոխիրն անցնում հողի տակ, որ չարի փոշին չտարածվի [2, էջ 38]: Ժողովուրդը բնությունը դիտարկել է որպես ունիվերսալ էկոլոգիական արժեք. այն կյանք է պարգևում, սովորեցնում ապրել ու պայքարել: Մեր նախնիների մտածողության մեջ Բնությունը չի սահմանազատում կյանքն ու մահը, այն սահմանազատում է բարին ու չարը և խոչընդոտում չարի գործը: Բնության գերիշխությունը ոչ միայն կյանքի այլև մահվան վրա այնքան ակնառու է այս առասպելում, որ պատժված չարն անգամ ծառայում է բնության մեջ կայուն հավասարակշռության պահպանմանը. «Մինչ այսօր

թոնիրն ու ջուրը կա, և այն ջուրն է, որ սարի տակով կիջնաՄեղրագետի ակնեն կբխե և այդ գետը կկազմե» [1, էջ 149]:

Հայ առասպելաբանությունում Բնությունն արարիչ է, այն կենսական ներուժի աղբյուր է և սնում է իր քաջազունիներին: Բնության նկարագրությունները, կենդանիների, բույսերի, բնության երևույթների հետ համեմատությունները առասպելների բովանդակության առանցքային մասն են: Օրինակ, հայտնի է մի շարք վիպական գրվածքներ ժայռում կամ ջրերում արգելափակված հերոսների՝ Մասիսի վիհում Արտաշեսի որդի Արտավազդի, Դավթի որդի Փոքր Միհերի, «Վահագն վիշապաքաղ» առասպելում Վահագնի ծնունդը և այլն:

Հայ բանահյուսության առավել տարածված և մարդկանց ամենօրյա հարաբերությունները ներկայացնող ժանրերից մեկը հեքիաթներն են: Դրանք ամփոփում են մարդու անսպառ երևակայությունը, նրա երազանքները, չարի ու բարու անսկիզբ ու անվերջ պայքարը, մահվան նկատմամբ կյանքի հաղթանակը: Կենդանական և հրաշապատում հեքիաթներում գործող հերոսներն անձնավորված կենդանիներ են, բույսեր, անշունչ առարկաներ: Սա խոսում է այն մասին, որ մեր նախնիները չեն անտեսել բնության դերը և նշանակությունը, ավելին, ըստ նրանց՝ շրջապատող աշխահում դիտվող փոփոխությունները, երևույթները պայմանավորված են բնության մեջ գործող օրենքներով և օրինաչափություններով:

Էկոլոգիական արժեբանության տեսանկյունից տեսական և գործնական հետազոտության լայն հնարավորություն են ընձեռնում քնարական ստեղծագործությունները: Աշխատանքային երգերը, որոնց մեծ մասը հորովելներն են, արտացոլում են աշխատավոր գյուղացու մտքերը բերքի առատության, բնության տարերքների, աղետների, եկեղեցական տասնորդի և բարձրյալի ողորմության մասին: Հայ գյուղացին հոգսաշատ է, սակայն ազնիվ, մարդասեր, հյուրընկալ: Կան երգեր, որոնցում նկարագրվում է բնությունը. «բնության զգացողությունը, գեղջկական կյանքի հովվերգությունը…, գիշերային անդորությունը, հովվի սրնգի մեղեդին…: Բնության և կենդանական աշխահին նվիրված երգերում ասացող կան բանահյուս գեղջուկը զարմանալի ճշգրտորեն բնութագրում է իրեն շրջապատող թռչուններին թե արտաքին հատկանիշները և թե վարքագծով» [2, էջ 135-136]: Կենդանի և անկենդան բնության օբյեկտների անձնավորման, համեմատության բազմաթիվ օրինակներ կարող ենք հանդիպել պանդխտության, օրորոցային, սիրային երգերում:

Էկոլոգիական արժեքները մեկուսացված գոյություն ունենալ չեն կարող, դրանք պայմանավորված են համամարդկային արժեքների համակարգով և անձի մտավոր, հոգևոր, բարոյական զարգացման մակարդակով: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ հայտնի են բնապահպանական բովանդակությամբ առակներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, քնարական ստեղծագործություններ, որոնք վերաբերում են կյանքի այս կամ այն երևույթին, բնութագրում «մարդ-հասարակություն-բնություն» բազմամակարդակ փոխհարաբերության ամենատարբեր կողմերը: Խոսելով միասնության, հավասարության, ճշմարտության բանաձևերով՝ այդ ստեղծագործություններն ամբողջացնում են ժամանակաշրջանի հոգևոր-բարոյական նկարագիրը, որի կարևոր բաղադրիչը էկոլոգիական արժեքներն են: Այսօր ոմանք, առաջնորդվելով շահույթ ունենալու մոլուցքով՝ անխնա և անպատիժ օգտագործում են մեր հայրենիքի բնական պաշարները, չգիտակցելով դրա անդառնալի հետևանքները: Վտանգված է մեր երկրի ոչ միայն էկոլոգիական, այլև հոգևոր անվտանգությունը, «սակայն ավելի կործանարար է բացառապես մարդուն բնորոշ այն բարձր բարոյական որակների կորուստը, որոնք բնորոշում և գնահատում են մարդուն, նրա արժեքային համակարգը»[5, էջ 7]:

Մարտիրոս Սարյանը գրել է. «Բնությունն արարում է մարդուն, որպեսզի հենց մարդու միջոցով տեսնի իրեն և հիանա իրենով»: Այսինքն, այն բոլոր հատկանիշները, որակները, նորմերը, արժեքները, որոնք բնութագրում են անձին, հասարակությանը արմատավորվում են մարդ-բնություն համակարգում և արտացոլվում նաև առած-ասացվածքներում: Օրինակ, «Պտղատու ծառին ճղները քաշ են լինում», «Ժողովուրդը քնած առյուծ է, որ զարթնավ էլ չքնի», « Ամառվա անձրևին, ձմեռվա արեգակին մի հավատա», «Ինչ աղբրից մարթ ջուր խմի, էն աղբրին քար չի քցի», «Պէտքն ի հող, անպէտքն ի յարև», «Շան հետնայ ընգերացի, փէղը ձեռիցդ մի քցի», «Գառիցը շուն, շանիցը գառ» և այլն:

Հնում հայերը ելնելով կենսափորձից՝ հավատում էին, որ, եթե խնամում են ծառերը, Քրիստոսից օրհնություն են ստանում: Սերնդեսերունդ փոխանցվելով խտացել են մարդ-բնություն կապեր արտահայտող բազմաթիվ մտքեր, բարոյախրատական քարոզներ և ժամանակի հոլովույթում արժեքի իմաստ ստացել: Այսօր էլ մեր պապերից շատ հաճախ լսում ենք՝ «Ծառը ջրիր, Աստծուց օրհնանք ստացիր», «Ինչ որ ցանես, այն կհնձես», «Ամպի գոռալն անձրևի նշան է», «Մի ծաղիկով գարուն չի գա», «Զուլալ ջուրը հիվանդի դեղ ա», «Նոյն ծաղիկէն օձը թոյն կը շինէ, մեղուն՝ մեղր»:

Էկոլոգիական արժեքներն ունեն ինտեգրատիվ բնույթ և միտված են լուծելու «մարդ-հասարակություն-բնություն» համակարգում առկա հակասությունները: Առավել ընդգծված հակասություն է ձևավորվում մարդու պահանջմունքների բավարարման և էկոլոգիական անվտանգության ապահովման սահմանագծում, երբ մարդն առաջնորդվում է կեղծ, երկրորդային պահանջմունքներով՝ անտեսելով էկոլոգիական արժեքները, մարդ-բնություն փոխհարաբերության կարգավորման բարոյագիտական նորմերը: Առաջացած էկոլոգիական աղետների մեղավորն մենք ենք, քանի որ «Երբ կացինն եկավ անտառ, ծառերը ասացին... Կոթը մեզնից է»:

Բնության նկատմամբ սերը, խոնարհումը ու պատասխանատու վերաբերմունքը հայ ժողովրդի ազգային դիմագծի կարևոր բնութագրիչներից է և որպես առանցքային գաղափար արտացոլված է հայ բանահյուսության ժանրերում: Հայ բանահյուսության էկոլոգիական ներուժի բացահայտումը և ուսուցման գործընթացում կիրառելու մեխանիզմների մշակումը պետք է դառնա առաջնային մանկավարժական ավանդույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Երկեր Ը, Երևան 1985:
2. Դոլուխանյան Ա. «Հայ ժողովրդական բանահյուսություն» ուսումնական ձեռնարկ, Երևան:«Զանգակ-97» 2008, 269 էջ
3. Նալչաջյան Ա., Մկրտչյան Ս., Էթնիկական մանկավարժություն: Բուհական դասագիրք: Երևան «Զանգակ-97» 2003, 312 էջ:
4. Карапетян Н.З. Закономерности и особенности экологического образования и воспитания учащихся основной школы. Сборник статей научно-информационного центра «Знание» по материалам XVI международной научно-практической конференции: «Развитие науки в XXI веке» 2 часть, г. Харьков: 2016. –38-42с.
5. Конрад Лоренц Оборотная сторона зеркала. М. изд-во “Республика” 1998г.-458с.
6. Моисеев Н.Н. Экология и образование. М., ЮНИСАМ, 1996.-191с.
7. Никандров Н.Д. Россия: ценности общества на рубеже XXI века.- М.: 1997.- 140с.

8. Стошкус К. О понятии экологической культуры // Проблемы формирования экологической культуры.- Вильнюс, 1987.- 22-42 с.

РЕЗЮМЕ

Отражение экологических ценностей в жанрах армянского фольклора

Нелли Карапетян

Ключевые слова: экологическая ценность, коэволюционное развитие, экологически грамотное поведение, система «человек – общество - природа», армянский фольклор, экологическая культура, экологический потенциал, экологическая аксиология.

В статье рассмотрена проблема взаимоотношений человека и природы в жанрах армянского фольклора. На основе анализа и обобщения теоретических взглядов ряда ученных уточнена и по-новому охарактеризована понятие «экологическая ценность».

В статье рассматриваются методологические подходы, которые с точки зрения экологической аксиологии являются основополагающими для определения структуры и содержания экологических ценностей. Выявлено, что экологические ценности отражены в произведениях фольклора и определяют моральные нормы и экологически грамотное поведение в отношениях «человек – общество - природа».

SUMMARY

Reflection of Ecological Values in Armenian Folklore Genres

Nelli Karapetyan

Key Words: ecological value, coevolutional development, Armenian folklore, “human-society-nature” interrelation, ecological potential, ecological culture, ecologically literate behavior, ecological determination.

In the article, the issue of human and nature interrelation in the Armenian folklore genres is observed. Theoretical views of different thinkers are analyzed and summarized on the concept of “ecological value” and there is a new definition given to the concept.

In the article, there are discussed a number of methodological approaches which are fundamental for the ecological values’ structure and certitude from the perspective of ecological determination. It has been revealed that the ecological values are reflected in national folklore works and are conditioning the ethical norms and ecologically literate behavior in the “human-society-nature” interrelation.